Վերապատրաստող կազմակերպության
«ԿԳՄՄՆ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց ՊՈԱԿ»

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշակերտների մոտիվացիան «Շրջված դասարան» մեթոդով

Անցկացման վայրը՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Արինե Ղազարյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի միջնակարգ դպրոց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է և պատշաճ տեղ է գրավում ուսումնական ծրագրերում: Աշխարհագրություն դպրոցական առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել նվազագույն աշխարհագրական և քարտեզագրական մշակույթ,որն անհրաժեշտ է լիարժեք քաղաքացու համար՝ անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից: Առարկան ունի կրթական և դաստիրակչական բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ,ունի նաև եզակի գործառույթ: Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի ու ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ: Գործ ունենալով ինչպես բնական պայմանների, այնպես էլ հասարակական օբյեկտների և երևույթների հետ աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարակագիտական գիտությունների շփման հատվածում, սերտորեն փոխկապված է դրանց հետ: Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը: Աշխարհագրությունն է, որ երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք,երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք: Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին,ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը տարբեր ժողովուրդների սովորություններին,նյութական ու հոգևոր մշակույթին:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի նույթն ու առանձնահատկությունները,որոնք գոյություն ունեն մի կողմից մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստաանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը: Աշխարհագրությունը կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ,ինչպիսիք են՝

1. Յուրահատուկ միջազգային լեզվի՝ աշխարհագրական քարտեզից օգտվելու, ինչպես նաև պարզունակ քարտեզ-սխեմայի կազմման կարողություն:
2. Բնական և տարբեր երկրներում ու միջազգային ասպարեզում առկա հասարակական երևույթների մասին բազմապիսի աղբյուրներից ստացվող տեղեկատվության ամբողջացման ու համակարգման կարողություն:
3. Աշխարհագրությունը տալիս է տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու կարողություն:
4. Ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու կարողություն:
5. Աշխարհագրական տեղեկատվական համակարգից (GIS և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու տարրական կարողություն):

Այդ ամենի հետ մեկտեղ աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որը նախնական պատկերացում է տալիս նաև աշխարհագրական գիտությանը հարակից մի շարք գիտությունների հիմունքների մասին,որոնց հատուկ ուսումնասիրությունը ինքնուրույն առարկայի ձևով չի մտնում հանրակրթության բովանդակության մեջ: Դրանք են՝ երկրի մասին գիտությունները:

Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» ուսումնական առարկա

Գրական ակնարկ

«Շրջված դասարան» մեթոդը մանկավարժական մոտեցում, որը փոխում է ուսուցման մեթոդների ավանդական կազմակերպումը: Սովորաբար տեսական մասը առկա ուսուցման միջոցով փոխանցվում էդասարանում,իսկ գործնական մասը կատարվում է տանը, ինտերակտիվ ուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելու նպատակով: Այս մեթոդը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում էդասարանի շրջումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր,որոնք ուսուցիչներն իրենք են պատրաստում, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն: Ուսումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ: Դա հրանավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանակավարժական աշխատանքներ իրականացնելու,աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար:

«Շրջված դասարան» մեթոդի նպատակները.

- Պասիվ աշակերտների ներգրավվածությունը
- Մոտիվացիայի բարձրացում
- Տեսադիտման անսահմանափակ հնարավորություն
- Անհատական մոտեցման հմտություններ

«Շրջված դասարան» մոդելի դրական և բացասական կողմերը.

Այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց հարաբերությունները ամրապնդելու համար։ Հաշվի առնելով այն փաստը,որ դասի տեսական մասն արդեն փոխանցվել է դասը սկսելուց առաջ,ուսուցիչը կարող է ավելի շատ

ժամանակ տրամադրել աշակերտների կողքին լինելու համար և նրանց օգնել կատարել առաջադրանքներ, այն պահին, երբ դրա կարիքն առավել շատ են զգում։ Այն լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու, անհատականացնելու համար։ Այսպիսով աշակերտն հետևում է դասին իր համապատասխան ցանկալի տեմպով։ Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ,որքան ցանկանա։ Նրանք կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց կարիքների։ «Շրջված դասարան» մեթոդում աշխատանքը հիմնված է աշակերտների վրա։Վերջինս դառնում է իր ուսուցման ղեկավարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը։ Այսպիսով դասաժամին աշակերտի ներկայությանը նոր իմաստ հաղորդելն է։

Բացասական կողմերը.

«Շրջված դասարան» մեթոդը ունի նաև թերություններ։ Երկար ժամանակ է պահանջվում տեսանյութեր պատրաստելու համար։ Սակայն կայքերի շնորհիվ նյութերի ձևավորման աշխատանքներըհեշտացվում են։ Մանկավարժական տեսանկյունից ուսուցիչների համար մարտահրավեր է դասընթացների կազմակերպումը և տնային աշխատանքների հանձնարարումը։ Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումը խթանել է «Շրջված դասարան» մեթոդի, հեռակա ուսուցման,տարբեր զանգվածային բաց առցանց դասընթացների ստեղծմանը։ «Շրջված դասարան» մեթոդն առաջացնում է ուսուցչի վարքագծի խորը փոփոխություններ՝ դեմառդեմ մոտեցումից անցնելով կողք-կողքի մոտեցման։

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Աշխարհագրություն առարկան 6-րդ դասարանում տրվում է շաբաթական 1 ժամով։ Այն դասացուցակում տեղադրված է 4-րդ ժամին։ Դասարանում սովորում են 14 աշակերտ՝ 8 տղա, 6 աղջիկ։

Այս դասարանում ցանկացել եմ լուծել հետևյալ կարևոր խնիրները՝

1. Ճիշտ սովորել աշխարհագրական տեղանունները։
2. Ճիշտ և սահուն օգտվել աշխարհի ֆիզիկական քարտեզից։
3. Ճիշտ և հստակ պատկերացում կազմել աշխարհագրական թաղանթի ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին և կարողանալ բացատրել դրանց պատճառահետևանքային կապերը։
4. Ուրվագծային քարտեզի վրա կարողանալ ներկայացնել համապատասխան աշխարհագրական վայրերը։
5. Խմբային աշխատանքների միջոցով օգտագործելով <<շրջված դասարան>> մեթոդը՝ թեման առավել ամրապնդվում և յուրացվում է աշակերտների կողմից։

Փորձարարական դասեր

Փորձարարական դաս 1

Քանի որ աշխարհագրություն առարկան հանրակրթական դպրոցներում սկսում է 6-րդ դասարանից,ուստի ընտրել եմ «Աֆրիկայի աշխարհագրական դիրքը,ափագիծը, ռելիեֆը թեման»։ Որոշեցի օգտագործել «Շրջված դասարան» մեթոդը.

Աշակերտներին հանձնարարեցի տանը ծանոթանալ և ուսումնասիրել Աֆրիկա մայրցամաքի հայտնագործման պատմությունը,ֆիզիկական քարտեզին և տետրերում գրի առնել աշխարհագրական տեղանուններն ու սովորել։ Դասն սկսվեց հարցադրումների միջոցով և ընթացավ բուռն քննարկումներով։ Քանի որ որոշ աշակերտներ ունեցել էին որոշակի դժվարություններ որոշ աշխատանքներ կատարելիս, ուստի աշակերտներին կարողացա խմբավորել հետևյալ կերպ.

Այն աշակերտները, ովքեր թեման յուրացրել էին,բայց դժվարանում էին քարտեզի վրա ցույց տալ,խմբավորեցի աշակերտներին այն աշակերտների հետ, ովքեր շատ լավ գիտեին քարտեզը, սակայն թերանում էին նյութը վերարտադրելիս։ Արդյունքում մեթոդը օգնեց աշակերտներին լրացնել մեկը մյուսին։ Հարց ու պատասխանի միջոցով միջառարկայական կապ ստեղծվեց «Պատմություն» առարկայի հետ, քանի որ խոսվեց նաև տարածաշրջանի գաղութացման՝ բնիկների կյանքի ու կենցաղի մասին։ Հարց ու պատասխանի միջոցով ամրապնդվեց աշակերտների տեսական և գործնական գիտելիքները։ Այսպիսով աշակերտները հստակ ու սահուն խոսում էին Աֆրիկա մայրցամաք տարածաշրջանի մասին և ճիշտ ու արագ կողմնորոշվում քարտեզի մոտ։ Հաջորդ թեմայի համար աշակերտներին հանձնարարվեց տանը ծանոթանալ Աֆրիկա մայրցամաքի կլիմայի հետ և ուրվագծային քարտեզներում նշել Աֆրիկայի գետերն ու լճերը։

Փորձարարական դաս 2

Դասն սկսեցի «մտագրոհի» մեթոդով։ Աշակերտները արագարտահայտում իրենց մտքերը,որոնք վերաբերվում էին Աֆրիկայի կլիմային։ Այնուհետև հարց ու պատասխանի միջոցով աշակերտները հասկացան թե որքան կարևոր է կլիմայստեղծ գործոնների դերը կլիմայի ձևավորման համար։ Աշակերտնեից ոմանք թվարկեցին կլիմայական գոտիները,մյուսները գտնում էին ուրվածային քարտեզի վրա՝ համապատասխանեցնելով ֆիզիկական քարտեզին։ Այնուհետև կրկին օգտվելով «Շրջված դասարան» մեթոդից, աշակերտները շարունակեցին դասը ներկայացնելով Աֆրիկայի գետերն ու լճերը։ Աշակերտների մի խումբը ներկայացրեց ջրագրական ցանցի վրա ազդող գործոնները՝ ռելիեֆ,կլիմա և այլն մյուս խումբը ներկայացրեց գետերը իրենց վտակներով, իսկ 3-րդ խումբը՝ լճերը և նրանց ծագումը։ Արդյունքում զուգահեռ անցկացվեց Աֆրիկա մայրցամաքի և ՀՀ կլիմայի միջև ստեղծելով հետադարձ կապ։ Հստակեցվեց եղանակային ցուցանիշները և դրանով պայմանավորված ջրագրական ցանցի խտությունը։ Աշակերտները ճիշտ պատկերացումներ կազմելով ստացան համապատասխան գիտելիքներ Աֆրիկայի՝ որպես ամենատաք մայրցամաք լինելու վերաբերյալ կարևորելով հասարակածի դերը կլիմայի ձևավորման գործում։ «Շրջված դասարան» մեթոդի միջոցով սովորողները լրացնելով միմյանց սովորեցին կատարել թիմային աշխատանք, օգնել,լրացնել միմյանց։ Դասն ամփոփվեց հարց ու պատասխանի միջոցով։ Հարցադրումներ կատարվեց ուսուցչի կողմից,որն ամրապնդեց աշակերտների գիտելիքները։ Դասն անցավ արդյունավետ,աշակերտներից ոմանք ստացան միավորային գնահատականներ մյուսներն էլ արժանացան գովեստի խոսքերի։



Նկ.1. Աֆրիկա ֆիզիկական քարտեզ



Նկ.2. Աֆրիկա կլիման և ներքին ջրերը

Եզրակացություն

Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին տրված թեման,դիտարկեցին կապը մյուս առարկաների (պատմություն,մաթեմատիկա) հետ, ծանոթացան Աֆրիկա մայրցամաքի տեղանքին,ուսումնասիրեցին նրա ռելիեֆի զարմանահրաշ,հեքիաթային տեսարանները։ <<Շրջված դասարան>> մեթոդը օգնեց սովորողներին մանրակրկիտ դիտարկումներ կատարել թեմայի շուրջ՝ լրացնելով մեկը մյուսին։ Այս մեթոդի շնորհիվ կարողացա գիտելիքների փոխանցողի դերից անցում կատարել գիտելիքների միջնորդի դերի ուղեկցողի,խորհրդատուի և ղեկավարողի դերի և ներգրավեցի աշակերտներին դասընթացի պատրաստմանը։

Մեթոդի միջոցով սովորողները ծանոթացան և ամրապնդեցին իրենց գիտելիքները Աֆրիկա մայրցամաքի ջրագրական ցանցի ձևավորման և առանձնահատկությունների վերաբերյալ։ Դասը շրջելու տրամաբանական հիմք հանդիսացավ ուսուցիչ-աշակերտ կապակցումը, որի միջոցով Աֆրիկայի ջրագրական ցանցի վերաբերյալ աշակերտները բավականին մեծ գիտելիքներ ստացան և ապահովվեց փոխադարձ կապը։ Մեթոդը կարևորում եմ նրանով,որ այն ապահովում է անհատական մոտեցման հմտություններ և աշակերտը դառնում է դասընթացի համամասնակիցը։

Եկա այն համոզման, որ այս մեթոդը օգնում է աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը, պասիվ աշակերտների ներգրավվածությանն ու ակտիվացմանը,նպաստեց նրանց հետաքրքրությունների զարգացմանն ու գիտելիքների ավելացմանը։

Հասկացա նաև, որ ըստ այս մեթոդի աշխատանքը հիմնված է աշակերտի վրա, ով և դառնում է իր ուսուցման վերակատարը։

Հավելված

Դասի պլան 1

Ուսուցիչ՝ Արինե Ղազարյան

Առարկա՝ Աշխարհագրություն	Ամսաթիվ 20.04.2022	Կիսամյակ 1	Դասարան	6-րդ
Թեմա		Աֆրիկա,աշխարհագրական դիրքը,ափագիծը,ռելևֆը։		
Օգտագործվող նյութեր		Դասագիրք,տետր,քարտեզ,ուրվագծային քարտեզ,գրիչ,դպրոցական ատլաս, լուսանկարներ։		
Դասի նպատակը		Բացատրել աշխ.դիրք հասկացությունը,վերլուծել մայրցամաքի աշխ.դիրքի առանձնահատկությունները։Ներկայացնել Աֆրիկայի դիրքը հասարակածի նկատմամբ,իմանալ մակերևույթի ձևերը,ծայրակետերը,ափերը ողողող ծովերն ու օվկիանոսները։		

Վերջնարդյունքները	Սովորողները պետք է իմանան՝ 1.մայրցամաքի դիրքը աշխարհի ֆիզիկական քարտեզի վրա 2.ներկայացնել հայտնագործման պատմությունը 3.թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մակերևույթի ձևերը 4.հիշել բոլոր աշխարհագրական տեղանունները և հասացությունները

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեությունն և Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5 րոպե	ողջունում են ուսուցչին, բացում դասագրքերը	Ողջունում է աշակերտներին, ստուգում հաճախումները և անցնում դասին	Ի՞նչ է աշխարհագրական դիրքը։ Որո՞նք են Աֆրիկայի աշխ. դիրքի առանձնահատկությունները։	Հարց ու պատասխանի մեթոդ
15 րոպե	Լսում են	Բացատրում է մայրցամաքի ափագծերի մասնատվածությունը, դիրքը հասարակածի նկատմամբ և ռելիևֆի ձևերը։	Ինչու՞ է Աֆրիկան համարվում սարահարթային մայրցամաք։ Ներկայացնել Աֆրիկայի անապատները։	Բացատրացուցադրական մեթոդ։

15 րոպե	2,3 աշակերտ քարտեզի վրա ցույց են տալիս տեղանունները,մակերևույթի ձևերը,ծայրակետերը։4 աշակերտներ տեղում աշխատում են ուրվագծային քարտեզներով, իսկ մյուսները հետևում են քարտեզի ճիշտ ներկայացնելը։	Առաջադրում է հարցեր։	Երիտասարդ և հին հասակի ի՞նչ լեռներ գիտեք։ Ափերը ողողող ծովերն ու օվկիանոսները։	Շրջված դասարան մեթոդ։

5 րոպե	Նշում են նոր թեման և տնային առաջադրանքները: Աֆրիկայի կլիմայական գոտիները և ներքին ջրերը:	Արագ թվարկում է գետերն ու լճերը:	Ձեզ դուր եկա՞վ «շրջված դասարան» մեթոդը:	
5 րոպե	Լսում են	Ուսուցիչը տալիս է անհասկանալի հարցերի պատասխանները:	Ի՞նչ է կլիման: Ի՞նչ ծագում ունեն Աֆրիկայի լճերը, թվել դրանք:	Բացատրական մեթոդ:

Դասի պլան 2

Ուսուցիչ՝ Արինե Ղազարյան

Առարկա՝ Աշխարհագրություն	Ամսաթիվ 27.04.2022	Կիսամյակ 1	Դասարան	6-րդ
Թեմա		Աֆրիկայի կլիման,ներքին ջրերը։		
Օգտագործվող նյութեր		Դասագիրք,տետր,քարտեզներ,ուրվագծային քարտեզ,գրիչ,դպրոցական ատլաս, լուսանկարներ։		
Դասի նպատակը		Վերլուծել Աֆիկայի կլիման ձևավորող գործոնները, հիմնավորել և բացատրել թե ինչու է ամենատաք մայրցամաքը։Տեղեկանալ Աֆրիկայի ջրագրական ցանցի առանձնահատկություններին։Քարտեզի վրա սահուն ցույց տալ կլիմայական գոտիները, գետերն ու լճերը։		
Վերջնարդյունքները		Աշակերտները կարողանան ըստ Բլյումի աստիճանակարգի պատասխանել թեմային վերաբերող հարցերին։		

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեությունն Աշակերտներ	Ուսումնական գործունեությունն և Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ)ներ)
5 րոպե	ողջունում են ուսուցչին ,բացում դասագրքերը, ուրվագծային քարտեզներն ու ատլասները։	Ողջունում է աշակերտներին, ստուգում հաճախումները և անցնում դասին։	Աֆրկայի կլիմայի վերաբերյալ տարբեր մտքերի արտահայտում։	Մտագրոհ
15 րոպե	Լսում են	Բացատրում է անհասկանալի հարցերը,քարտեզի վրա ցույց է տալիս այն տեղանունները որոնք դժվարացել են գտնել աշակերտները։	Որո՞նք են պասսատների դերը Աֆրիկայի կլիմայի ձևավորման գործում։	Բացատրացուցադրական մեթոդ։

20 րոպե	4 աշակերտներ իրար հաջորդելով բացատրում են նյութը, միևնույն ժամանակ 2 աշակերտ այդ ամենը ցույց է տալիս քարտեզի վրա, մնացած աշակերտները բաժանվում են 2 խմբի և	Առաջադրում է հարցեր։	Ինչպիսի՞ սնուցում ունեն մայրցամաքի կետերը։Հետաքրքրեց արդյո՞ք մայրցամաքի կլիմայի ձևավորումը իրենց։	<<Շրջված դասարան և զույգային աշխատանքի>> մեթոդ։

	հարցեր ուղղում միմյանց։			
5 րոպե	Նշում են նոր թեման և տնային առաջադրանքները։ Աֆրիկայի բնական զոնաները։	Ծանոթացնում է թեմային, քարտեզի վրա ցույց տալիս բնական զոնաները։	Կլիմայից բխող ինչպիսի՞ եղանակներ են լինում Աֆրիկայում։	Բացատրական մեթոդ։

Օգտագործած գրականության ցանկ

- «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն» 6-րդ դասարան 2018թ., Հովսեփյան Արմեն, Գրիգորյան Արսեն, Մանասյան Մաքսիմ
- «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա» ԿԳՄԱ 2017թ.
- Հանրակրթական դպրոցի Աշխարհագրություն առարկայի չափորոշիչներ և ծրագրեր 2020թ.
- «Աշխարհագրություն» ուսուցչի ձեռնարկ 2018թ., Արմեն Հովսեփյան

Բովանդակություն

Ներածություն……2

Գրական ակնարկ……4

Փորձարարական հետազոտություն……6

Փորձարարական դաս 1……7

Փորձարարական դաս 2……8

Եզրակացություն……11

Հավելված……12

Դասի պլան 1

Դասի պլան 2

Օգտագործած գրականության ցանց……18